



Հնապարհապետ, խանութների դիմաց խորթ-  
ված մի քանի «Ջոնլեր», որոնց հուլիսը վաղուց է  
հինչ փայլում է, պապիկին է տալիս արծաթի  
նման, արդեն ապօրած լինելով երկրի կուրծքը,  
հինքնավստահ կերպով խօսում, գտնում և  
դուրյալների թիւններ են անում առաջիկայ ավոդ  
դորենի բերքի մասին և հենց այժմից նախա-  
պատրաստութիւններ են տեսնում մարդիկ  
ուղարկելու իրանց հարեւան հեռաւոր գիւ-  
ղերից մէկուս գտնվող, քանի տարիներով  
խեղճ աղքատներու արդար վաստակը օգտվող  
թիւերը ձուլայի մօտ, որ երկինքը կապի, նրա  
պատուհասը անցկացնի. «Ախպէր, էդ մարդը  
որ տարին կապում է, ըսկի տեսել էք կար-  
կուտ, հիմա թաղա մարդիկ են գուրս եկել  
ևւ միջ հաւատացնում են, թէ սուտ բաներ են  
դրանք»: Բայց մեր տուուգ-տուուգ խօսող աղա  
չկուտարները գիտէն, որ իրանց հարեւան  
հարաբարակեցողիչ շատ չափերը անցելով 1900  
նարարատիկ թվականին անբերրիութիւնից  
ստիպված ծախել են իրանց ունեցած-չունե-  
ցածը, իրանց տան սիւնը կազմող, իրանց ե-  
րեխաների պարուտտը հայթաթող, իրանց  
դոյզ աչքի լոյսը կազմող՝ եզներն ու գոմէշ-  
ները. նկատում ևս, ինչպէս խորտակված,  
փշրված են տանջված իրանց հարեւան եղ-  
բայրները խուսափում են համախմբումներից ևւ  
գլուխները կորցրած, ձեռները ծոցներին, գու-  
նատ ու ստաւած գէւորով մի կողմը քաշված,  
սգում են իրանց անմխիթար ներկան ևւ ան-  
յոյս ապագան. հետաքրքրվում են արդեօք, որ  
դրանց կերածը ձմրան ձիգ ալիւններում աւա-  
ղախան կորեկն է եղել, որ այժմս այդ էլ չը  
կայ, ևւ թէ՛ գիտեն, լսել ևւ տեսնում են,  
ինչո՞ւ են լռել, ինչո՞ւ քարացել ևւ ինչո՞ւ չեն

շտապում, որքան կարելի է շուտ, ընդհանուր հաւաքական ուժերով օգնութեան հասնել այդ ընտելեան խորք գաւառներին. էլ որ օրվայ համար են Աղղանի ունեւոր «աղափարները»։ Միթէ աղղանցի խեղճերին այս տարի չէ վիճակվում ձայնակցել իրանց երջանիկ հարեւանների սար ու քար, դաշտ ու ձոր դղրդեցնող «Տօր ալօյին» եւ միթէ մեր գիւղից օտարութեան մէջ գտնվող աւելի բաղդաւորները պէտք է իրանց անտարբերութեան մասին, մի նոր դուռ բաց անեն անդուր եւ անհոգի վախառու շահատակութիւններին։

Բ. Յարութեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Թաւաշուր Կայսրը ներկայ տարվայ փետրվարի 17-ին բարեհաճեց հրամայել, որ զինուորականներին թաղելու ժամանակ զօրքերը զինուորական պատուներ չը տան այնպիսիներին, որոնք անձնասպանութեամբ վերջ են դրել իրանց կեանքին, մինչեւ անգամ եւ այնպիսի դէպքերում, երբ անձնասպանութիւնը խեղաքար դրութեան մէջ է կատարված եւ հողեւորականութիւնից թաղման թոյլտուութիւն է ստացված։

Զորքերի մարտի 14-ին, Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութիւնը հետադրով տեղեկութիւն ստացաւ Պետերբուրգից, որ Կովկասեան դիւղատնտեսական ցուցահանդէսի ծրարագիրը հաստատված է երկրագործութեան միջնատրի կողմից մի քանի փոփոխութիւններով, որոնք վերաբերում են այդպիսիական բաժնին։

Զորքերի մարտի 14-ին, Թիֆլիսում վախճանվեց բաւական յայտնի ուսու գրականագետ Իվան Իվանովիչ Սվեդոմոյ, որ յայտնի էր գրականութեան մէջ «Իվանովիչ» անունով։ Հանգուցեալը 1895—99 թւերին «Хорошее Общество» լրագրի մշտական աշխատակիցն էր եւ բացի դրանից՝ յօդուածներ էր տպագրում Պետերբուրգի ու Մոսկվայի լրագիրներում եւ ամսագրերում։ Երէկ, մարտի 15-ին, Թիֆլիսի վրաց Կվալչէտի եկեղեցում տեղի ունեցաւ հոգեհանգիստ Սվեդոմոյի յիշատակին, որին ներկայ էին բազմաթիւ անձինք Թիֆլիսի գրական շրջաններից։

Մարտի 7-ին բնական գործիչների համաժողովը վճռեց իր ձայնն եւս միացնել այն միջնորդութեանը, որ յարուցել էին եւ ուրիշ համաժողովներ եւ որով խնդրվում է կառավարութիւնից մտցնել Ռուսաստանում և արտաւորների եւ մասնաւորապէս բնական գործիչների պետական ապահովագրութիւն։

Մեծ հետաքրքրութեան առաջացրեց Պետերբուրգի նահանգական դատարանում երդուհալների մասնակցութեամբ մարտի 10-ին ճշնվող դործը։ Մեղադրվում էին, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, ազնւական Ն. Գիւրեւիտ եւ ազնւականի կին Ն. Շախնաւիտ խաբէրալուծեան մէջ։ Մեղադրվողների յանցանքն այն էր, որ նրանք, գանազան մարդկանց խոստանալով արդիւնաւոր պատշոններ դնել արքունական հիմնարկութիւնների մէջ, կործանում էին փողեր դիւրահաւան մարդկանցից։ Իրանց արդարացնելու համար մեղադրվողները մասնացրեց էին անուամբ քանի վրա, որ այդ փողերը իրանց զբաղւմը չէին դնում, այլ տալիս էին մի բարձրաստիճան անձին, գաղտնի խորհրդականին, որ վերցնում էր նրանցից այդ փողերը, եւ թէ իրանք, մեղադրվողները, միայն նրա գործակալներն էին եւ գործում էին առանց որ եւ է չա՞ն ունենալու, միմիայն երախտագրութեանից զրկված դէպի գաղտնի խորհրդականը։ Բացի դրանից նրանք մասնացրեց էին անուամբ այն հանգամանքի վրա, որ խնդրատուները խոստացված պատշոնները չը ստացան, որովհետեւ զգաւորի խորհրդականը յանկարծամահ եղաւ։ Գաղտնի խորհրդականին մասնակցութիւնը համարեալ չը հաստատվեց դատարանում եւ մեղադրվողները դատաւարովեցին բոլոր իրաւունքներից զրկվելուն եւ վեց ամսվայ բանտարկութեան։

Քուծալիսի նահանգի Շորապանի գաւառում մարգանցի հանքերը շահագործելու համար, «Вазобек» լրագրի խօսքով, ֆրանսիական կապիտալիստների մի խումբ կազմակերպել է Պարիզում ակցիոնէրական մի նոր ընկե-

րութիւն։ Հիմնական դրամագումարը 1,600,000 ֆրանկ է։ Ռուսաստանում գործելու թոյլտուութիւնը այս օրերս է ստացել վերոյիշեալ ընկերութիւնը։

Պետերբուրգում ներկայումս գտնվում են անգլիական մի նոր մեծ ընկերութեան ներկայացուցիչները, որ հիմնվել է ոսկէ հանքեր ձեռք բերելու եւ շահագործելու համար Ռուսաստանում։ Միջոցաւ Լուրերին նայելով, այդ ընկերութիւնը մօտ 50 միլիոն դրամագումար ունի։ Ներկայումս նրա ներկայացուցիչները բանակցում են Բաղդիշիկու եւ Բարտալէվների ոսկէ հանքեր գնելու մասին Միւսուրի-նեան շրջանում։

Ֆինանսների միջնորդութիւնը հրատարակել է տեղեկութիւններ արքունական գինեւաճառութեան հետեւանքների մասին 1899 թւականի ընթացքում Ռուսաստանի 35 նահանգների մէջ։ Այդ տեղեկութիւններից երեւում է, որ պետական գանձարանը զուտ արդիւնք է ունեցել մենավաճառից 37 1/2 միլիոն ռուբլի։

Պետերբուրգի կայսերական զինուորա-բժշկական ակադէմիան հրաւեր է ստացել մասնակցելու Բիւրիւնի համալսարանի պրոֆէսոր Դոկտոր Ռուդոլֆ Վերխովի ծննդեան 80-ամեակի առաջիկայ տօնախմբութեանը։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻՍԻՑ մեղ գրում են. «Կիւրախի, մարտի 11-ին, Նոր-Նախիջեանի քաղաքային թատրոնում Կ. Արէշեանի դրամատիկական խումբը տուեց իր առաջին ներկայացումը «Թագի համար»։ Թատրոնը լիք էր չէր, բայց ներկայ եղողները լաւ ընդունեցին դերասաններին, մասնաւորապէս Կ. Արէշեանին, որի խաղը մի եւ նոյն ժամանակ եւ խելացի էր եւ զգացված։ Ժողովուրդն անվերջ ծափահարում էր նրան։ Ամենապիտան հիմնադրող արարուածն էր, երբ կարծես Կ. Արէշեան չէր խաղում, այլ ստեղծում էր։ Պէտք է խոստովանել, որ Կ. Արէշեան հայոց բեմի ամենամեծ յայտերից մէկն է։ Լաւ էր եւ Կ. Ստեփանեան Միքայէլ Բրաւոյի դերում եւ Կ. Զարեփեան Ստեփանեանի դերում։ Օր. Վարդիթեր եւ Մարի-Հրանդիկ խաղացին նրանց խառնադրում էր ձայնը։ Առաջինի ձայնը թոյլ էր, երկրորդինը՝ աւելի լալկանաւ։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻՍԻՑ մեղ գրում են. «Կիւրախի, մարտի 11-ին, Նոր-Նախիջեանի ակադէմիայի դասիչները «Արհեստաւորաց զորոցի» վիճակախաղն էր։ Այդ համակրելի զարոյցը, որի գտնիքի վրա գրած է՝ «Բանող ձեռքը չի մուրալ», այժմ ինքը սկսում է մուրալ, չնորհիւ նախկին տեսուչ Կ. Տէր-Զաքարեանի։ Այժմ զարոյցը պարտքեր ունի։ Զը հիտենք նոր տեսուչ Կ. Արէշեանին, որ անուամբ ան է, կը կարողանայ թիթեւացնել եւ բառեք զարոյցի ծանր վիճակը։ Զարմանալին այն է, որ այդ զարոյցը Բախայէլ Պատկանեանի գործն էր եւ Պատկանեան առաջին տեսուչն էր։ Ամեն օր բաժնետուներն էին մեծ բանաստեղծի թշնամիները եւ պնդում էին, որ զարոյցը գրութիւնը վատ է։ Մեռաւ անմոռաց Գամառ-Բաթրալեան եւ զարոյցի գրութիւնն իսկոյն... լաւ աղաւ։ Ոչ ոք չէր խօսում զարոյցի մասին, թէ եւ կարգերը վատացել էին եւ խօսել սկսեցին միայն այն ժամանակ, երբ համոզվեցին, որ արկղը... դատարկ է»։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեղ գրում են. «Էլսում ենք, որ վաղարշապատից 6—700 խընդիրներ են մտել սինօդ, որոնցով նրանք արհեստեղ եւ այդեւեղ են խնդրում։ Տարիների ընթացքում անուշադրութեան են մասնակցած եղել այս հարեւաւոր խնդիրները եւ միայն այժմ կամենում են վերջ տալ տնտեսողների եւ աղետեղների հարցին։ Կարծում ենք, որ այստեսեան մինչեւ այժմ կատարված կողմնապահութիւնը եւ արտաշահութիւնը դժուար կարողանան աջողութիւն ունենալ, որովհետեւ տնտեսողներ եւ աղետեղներ բաժանելու հարցում մասնակցում են այժմ նաեւ հասարակութեան կողմից ընտրված մարդիկ։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻՍԻՑ մեղ գրում են. «Րօստով քաղաքում, քաղաքային ընտրութիւնների ժամանակ, 100—150 թիկնաւորներից միայն 30—32 ձայնաւոր ընտրվեցին, որոնցից երեքը հայեր են։ Բէլլէ-Շահինեան, Բախիսաւրայեան եւ Պալապանեան։ Նոր-Նախիջեանի քաղաքային ընտրութիւնները տեղի կունենան միայն ապրիլին։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեղ գրում են. «Վերջապէս վաղարշապատն էլ ունեցաւ իր սեփական բժիշկը, բայց ոչ թէ հասարակական վրձնով եւ առանձին հրաւերով, այլ չնորհիւ այն հանգամանքի, որ վաղարշապատից նորաւարտ բժիշկ Տէր-Գրիգորեանցը, աւարտելով Մոսկվայի համալսարանի բժշկական մասը, վերադարձաւ հայրենի գիւղը, որպէս հարազատ զաւակ իր հասարակութեան։ Զբաւորներից երկուստարբ բժիշկը ոչ մի վարձատրութիւն չէ պահանջում եւ ուրախութեամբ ընդունում է իր մօտ եւ այցելում է ոտքով հիւանդների տները։ Սակայն ունեւոր եւ միջակ դասակարգը պարտաւոր է վարձատրել բժիշկի աշխատանքը եւ ապացուցանել, որ դաւառեց խորշոց ինտէլիգենտները չեն մնում գաւառում ոչ այն պատճառով, որ այնտեղ ապրուստի միջոց չեն գտնում, այլ որովհետեւ իրանց համար նպատակ են ընտրում հարստանալ եւ զուարճալի կեանք անցնելը։

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻՑԻՑ

Վան, փետրվարի 17-ին  
Նախորդ նամակովս մոռցած էի դրել, որ Վանայի «հայ տիկնանց ու օրիորդաց ընկերութիւնը» իր ծախքով որոշեցին մը որդեգրած է տեղիս Սանապատու. Կ. Գրիգորի որդանցին մէջ։ Ինքնին այս տեսակ պղծիկ նպատակները մենք մեծ ուրախութեամբ կարճատեղեցիք, նկատելով որ, առ ի չը գոյէ ազգային ուժերու, մեր որդերուն հոգը մեծ մասամբ ստիպված ենք օտար մարդասէրներու թողուլ մինչ յարաթ չանցնի, որ մասնաւորապէս ուսանայ հարուստներու «անխաբար» ոգիով ըրած մարդասիրական նուիրատուութիւններուն լուրը չի կարգեց լրագիրներուն մէջ։

Անշուք, երբ օգրը բաց կըրթայի եւ ձմեռը ուշ կը մօտենար, կարծեցիք որ, ուրիշ անգամներ պատահածին նման, զարուն ալ ուշ պիտի սկսէր հակակշիւր ըլլալու ձմեռն տեսութեանը։ Մեր այդ փափագի կարծիքը չի-րականացաւ սակայն ու դեկտեմբերի երկրորդ շաբաթէն մինչեւ յունվարի երրորդ շաբաթը—մէկ ու կէս ամսվայ պղծիկ ժամանակամիջոց մը—հայրեւ ձիւնի ու ցուրտի երես տեսանք, ու ահա 5 շաբաթէ ի վեր մեր պարտեղներն ու դաշտերը սեւցած են բոյսերը ընտելեան վերածնութիւնը կաւեւտել։ Ապրիլեան անոր-ժիւնի եղանակ մը՝ որուն վաղահաս երեւումը այնքան ալ օգտակար չի կրնար համարվել, քանի որ նստընում ու մեղմախոյս ձիւնը աշխարհագրական ու բնագիտական հայրենիքով աւելի նպաստաւոր պայման մը համարված է Հայաստանի քանի մը մասերուն բուսականութիւններու յաղորդութեամբ համար—քանի որ, շատ անգամ անձրեւները իրենց ժամանակին չեն դար։

Շաբաթէ մը ի վեր՝ բրիչն ու արօրը տեղ տեղ սկսած են երկրիս սիրտը ճանկերի, ու քանի մը օրէն, երբ գետինը քիչ մը չորնալ կըսկսի, երկրագործական ընդհանուր աշխատութիւնները մեծ թափով մը կըսկսեն։ Մեր երկրին համար, ուր վաճառականութիւնն ու շաբաթում չը կայ, ընտելեան դարձեւեղներն հետն է որ կըսկսի եւ ուղեւորը եւ գործունէութիւնը մարդերու՝ զարթեւած աւելումը մը սկսելու համար դառն պայմարը կենանքին։

Բարեկենդանի ուրախութիւններէն վերջ, անշուշտ վիզով ու արիւնքով արտով ուրախութիւն մը, որուն մէջ «ի վերուստ» միշտ տրտմութիւն մը կը կաթիլ,—եկեղեցին սեւ վառադրեաներով մը սեւապատվիլ տխրեցող արապաւորութեան մը տակ թաղուելու համար մեր ապաշխարողի սրտերը։ Թէեւ մեր երկրի աղքատ դասակարգին համար նպաստաւոր հաշիւներով կը հասնի մեծ-պահքը, սակայն նկատելի է, որ մինչ մէկ կողմէ իրար յաջորդող հարանիքներու շարքը կուգայ կը հասնի մինչեւ բարեկենդանի վերջին շաբաթը, որ, միւս կողմէ, յանկարծ, մեծ-պահքն է, որ իր խոտածրեր դէմքով կուգայ պատուար կանգնել անոր շարունակութեամբ դիմաց իր աղ ու հացի քմայքին ծառայեցնելով ապաշխարանաց եօթը շաբաթներ... Հայաստանեայց եկեղեցու տօնացոյցը, խելայիններէ կաղմված ըլլալու համարւին հակառակ, բաւական չի համարելով պահոց եօթը շաբաթները, ութը շաբաթ ալ Զատիկէն մինչ Հոգեգալտեան ութօրէքը—որով ընդամէնը 15 երկուր շաբաթներ—հրաման չի տար պատկ կատարելու՝ հակառակելով մինչեւ իսկ ընական օրէնքներուն, ըստ որում զարթող ընտելեան ծոցին մէջ նորածնի որդեւոր միա-

ւորումը աւելի անուշ, աւելի բնական ու աւելի նպատակաւոր կը լինի՝ քան տարուան ուրիշն ու եւ է մէկ եղանակին մէջ։ Ահա կարեւոր հարց մըն ալ, որ կուգայ բարդվել ուրիշ շատ կարեւոր հարցերուն քովի՝ ապագայ եկեղեցական ընդհանուր ժողովին ուշադրութեան առարկաներէն մէկը ըլլալու...

Այս տարի, բաղադրամբ անցնալ տարինեւրուն, հարանիքներ քիչ կատարվեցան մեր քաղաքին մէջ, մինչդեռ տարուան առատութիւնը ու աժնութիւնը հակառակ յուսացնել կուտային։

Յ. Գ. Երէկ մինչեւ իրիկուն տեղացող առատ անձրեւներէն վերջ, գիշերը մինչ առաւօտ բաւական մեծ քանակութեամբ ձիւն եկաւ, ինչ որ սակայն հազիւ երկու օրուան կեանք ունենայ՝ տեղի տալով գարնանային օդերուն։

Սորէն—Ա.

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Information» մատնագոյց է անում թիւրքական կառավարութեան մի նոր քաղաքական կարգադրութիւնը, որին ֆինանսական օրէնքի ձեւ է տուած։ Բ. Դուռը սահմանել է մի նոր հարկ, որ պէտք է անվի բացառապէս արհեստաւորներից։ Մինչեւ այժմ այդ հարկը անընդուն էր այն քրիստոնեաներից, որոնք հպատակ են սուլթանին։ Հարկի կատարվեցան այն էր, որ ցոյց արվելը բայեաին, թէ մասնագիտական նախաձեռն է նրա վրա, որպէս ազգաբնակչութեան ստոր դասի վրա։ Այժմ արհեստաւորական հարկը կամենում են դնել բոլոր Բալկանեան մանր պետութիւնների հպատակների վրա, չնթաքի-կելով նրան եւրոպական մեծ պետութիւնների հպատակներին։ Այս տարբերութիւնը ամենից աւելի պերճախօս կերպով ցոյց է տալիս, թէ ինչ նպատակի է ձգտում թիւրքական կառավարութիւնը արհեստաւորական հարկի միջոցով։ Եթէ կառավարութիւնը ի նկատի ունենար պաշտպանել ներքին արտադրութիւնը—Թիւրքիան դեռ եւս այնքան չէ անկշիւ, որ այդպիսի մոեքը ծագէին նրա մէջ—այն ժամանակ աւելի շուտ հարկի պէտք է ենթարկվէին եւրոպական մեծ պետութիւնների հպատակները, որոնք շատ աւելի վարպետ եւ հարուստ են, քան իրանց սերը, բոլորը եւ ուսմանցի արհեստակիրները։ Նոր հարկը իսկապէս պէտք է ծառայէ որպէս միջոց հաւաքելու ամենամանրամասն տեղեկութիւններ քաղաքական կամ, ասելի ճիշտ ասած, ոստիկանական նպատակով։ Այդ հարկից ազատ մնալը համարվում էր քաղաքական արտօնութիւն, որովհետեւ ով ազատ էր այդ հարկից, ազատ էր նոյնպէս թիւրք օտարկանութեան եւ թիւրք հարեւանների բռնութիւններից եւ դաւերից։ Որովհետեւ արհեստաւորների մէջ գտնված են իբր թէ շատ քաղաքական ազդեցատուներ, ուսումնասիրելով, արհեստաւորական հարկի միջոցով, կամենում են խոտ հակադրութիւն հաստատել նրանց վրա։ Այս պատճառով հիմա ոստիկանութիւնը եւս անհղով որոնում է ամեն տեղ Սերբիայի, Բոլշաքիայի, Չեքոսլովաքիայի, Յունաստանի եւ Բուլղարիայի հպատակներին, որոնք ապրում են Թիւրքիայում, որպէս արհեստաւորների կարծիքում է, որ Բալկանեան պետութիւնները կը հակառակին այս ստորագրուից հարկին։

«Köl. Zeitung» լրագրի Բեղադաղի թղթա-կիցը նախատեսում է, որ մօտ ապագայում տեղի կունենան խառնութիւններ Սերբիայում։ Առանձնապէս զօրեղ շարժումն նկատվում է, այդ լրագրի ասելով, Օբրէնովիչների արքայական տան դէմ եւ յօգուտ կարագէօրեկիւնների ընտանիքի։ Այդ շարժմանը նպաստում են հաւաքաւային Ունգարիայում հրատարակվող սերը լրագիրները։ Արքայական կարագէօրեկիւնների կուսակիցները վերջին ժամանակ, ըստ երեւոյթին, գտել են ազդեցալից մի ազգու միջոց։ Ազգաբնակչութեան մէջ տարածվում է մի պատկեր, որի վրա նկարված է Կարլ Գեօրգի սպանութիւնը իշխան Միլօ Օբրէնովիչի հրահանգով։ Պարզապես ժողովուրդը, որի միջոցութիւնից դեռ եւս չէ անհետացել ազատագրական այդ քաղաքական գիտնորի յիշատակը, չնորհիւ տարածվող պատկերի, սկսում է թշնամական զգացմունք տածել դէպի Օբրէնովիչների այժմ թագաւորող տունը։ Ազդեցատուների գործը հեշտացնում է այն հանգամանքը, որ Ալէքսանդր թագաւորի նոր ազգաբնակները, որոնց հետ կապվեց նա՝ ամուսնանալով Դրագա Մալինայի հետ, ժողովուրդին տալիք են դարձել իրանց մեծատուութեանը։ Սերբիայի մի այնպիսի երկիր է, ուր ազնւական դասակարգի գոյութիւնն անշուշտ է, եւ ահա մի այնպիսի երկրում թագաւորի այդ նոր ազգաբնակները կամենում են իշխաններին եւ իշխաններին դեր կատարել թագաւոր ըլլալը, սերբիական կոլդիտային բանակի կառավարիչ Պետրովիչի կրկն, իր մասին ստացած մեծ համարումով, հաջորդը բանը այն տեղը, որ դարձաւ ամենքին ատելի։ Երբ այսպիսի տրամադրութիւն է տրեւել երկրի մէջ արքայական ընտանիքի եւ նրա ազգաբնակների վերաբերմամբ, փոքր պատճառներն եւս կարող են մեծ հետեւանքներ առաջանել։ Ժողովուրդի ժողովուրդին հանգստացնելու համար այժմ լուրեր են տարածում, թէ մօտիկ ապագայում պէտք է տեղի ունենան ազատամտական փոփոխութիւններ սահմանադրութեան մէջ։

